



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԻԱՐԲԱՐԱՆԻ



ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ



Բացում 1876 Ամին

ՆԻՍՏ ԺԸ

11 ՓԵՏՐՎԱՐ 1877



ՂԱԼԱԹԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՑ ԼՐԱԳՐՈՅ

1877

ԳԻՒԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

Ստեփան Արարանեան	Փայտ	Ա.	Ատենապետ
Տիգրան Երուսաղեմեան	Էփէնաթ	Գ.	
Կարեղին Յ. Մելիքեան		Ա.	Ատենադպիր
Համբարձում Ս. Ալաճաճեան		Բ.	
Ասաբէլ Ալթուն Տիրրի		Գ.	

ՉԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Տ. Յովհաննէս Ք. Մկրեան		Ատենապետ
Տ. Գրիգոր Ք. Աճէմեան		
Սարգիս Ազարէկեան	Էփէնաթ	

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Յովհաննէս Երեան	Էփէնաթ	Ատենապետ
Գէորգ Ստամբուլեան		
Պօղոս Պառնասեան		

ԿԱԼՈՒԱՅՈՅ ԴԻՒԱՆ

Յակոբ Քաղաղեան	Էփէնաթ	Ատենապետ
Յովհաննէս Աղնաօրեան		
Ստեփան Պէյլիճեան		

ՅԱՐԱՔԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Տիգրան Երուսաղեմեան	Էփէնաթ	Ատենապետ
Սիսիլի Խոճասարեան		
Նազարէթ Շահպաղեան		

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Յարութիւն Մէրեէմ—Գուլի	Էփէնաթ	Ատենապետ
Համբարձում Մաղպուլեան		
Եղիազար Մէլիքեան		

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Տ. Ներսէս Գարդապետ Արարանեան		Ատենապետ
Կարապետ Շահպաղեան	Էփէնաթ	
Նշան Քաղաղեան		

ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Միքայէլ Մամիկոնեան	Էփէնաթ	
Ասաբէլ Ալթունեան		

ԽՄԲԱԴՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Կարապետ Խլթիւճեան	Էփէնաթ	Ատենապետ
Ստեփան Փափաղեան		

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Բացում 1876 Ամին

Ն Ի Ս Տ Ժ Ը

11 Փետրվար 1877

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԷՐ ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ (Ա.Յ.Յ.)

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	22 Գէորգ Ստամբուլեան	Բ. Պ	Խսկիւտար Ս. Կարապետ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ	23 Խաչիկ Մանկասարեան	Բ. Պ	
1 Խորէն Արքեպ. Նար Պէյ Բ. 2	24 Կարապետ Ազարումաճ. Բ. 2	49 Մհրան Պահճէքսիուլեան	
2 Կարապետ Ե Սերոբեան Բ. Պ	25 Համբարձում Մաղպուլեան	50 Յովհաննէս Ճիւղանեան Բ.	
3 Մաաթէոս Իզմիրլեան	26 Մինաս Գափամաճեան	51 Նիկողոս Ալաճաճեան Բ. 2	
4 Ամբրոսիոս Վ. Բուրինեանց	27 Յովհաննէս Պոյաճեան Բ. 2	52 Տրդատ Փափաղեան Բ.	
5 Գարեղին Բաթարեան Բ.	28 Ն. Իէզպուրեան Տօքթօր Բ. 2	(Գ. ՎիճԱԿ)	
6 Խորէն Կիրոյեանց	29 Պօղոս Պառնասեան	Բէրա և Գոսալմ Գոշա	
7 Հմայեակ Գիմարեան Բ. Պ	30 Յովհաննէս Սուրէնեան Բ. Պ	53 Արիկ Ունճեան	
8 Յովհաննէս Փափաղեան Բ. Պ	31 Սարգիս Ազարեկեան Բ. 2	54 Գրիգոր Սէլիմիճեան	
9 Ներսէս Ասլանեան	32 Սահակ Ապրո Բ. Պ	55 Մարտիրոս Յ. Տիլեան	
10 Պօղոս Խօլտամեան Բ. Պ	33 Սենէքերիմ Մանուկեան Բ. Պ	56 Միքայէլ Մամիկոնեան	
11 Եղնիկ Ապաչուէնի	34 Փէլաքումաճեան Տօքթօր	57 Նշան Քաղաղեան	
12 Արիտակէս Քահ. Մամր Բ. Պ	35	58 Ստեփան Խնդիրեան Բ. Պ	
13 Գէորգ Արծրունի	36	59 Տեղեմաք Մ. Էքսէրճեան Բ.	
14 Գրիգոր Աճէմեան	(Բ. ՎիճԱԿ)	60 Խիսա Չայեան	
15 Խորէն Փէլիպան. Բ. Պ	Պէլիկիմ աշ	61 Յարութիւն Նորատունկ.	
16 Յարութիւն Սերոբ.	38 Բարսեղ Հարաճեան	62 Գրիգոր Մարկոսեան	
17 Յովհաննէս Մկրեան	39 Կարապետ Ս. Խլթիւճեան	Միջագիւղ	
18 Սուքիաս Ստեփան. Բ. 3	40 Յարութիւն Մարգարեան	63 Կարապետ Պ. Պէրեանց Բ. Պ	
19 Սահակ Տ. Սարգսեան	ԵՆՆԻԳԱՓՈՒ	64 Յակոբ Կոստանդեան Բ. Պ	
20	41 Խաչատուր Ղազարոսեան	65 Յակոբ Պ. Նորատունկ.	
ԱՇԽԱՀԱԿԱՆՔ	42 Կարապետ Գ. Փափաղեան Բ. Պ	66 Յովհաննէս Աղայէկեան Բ. Պ	
(Ա. ՎիճԱԿ)	43 Մարուգէ Յրէնիկեան	67 Տիգրան Երուսաղեմեան	
Գուճգափու, Կէտիկ Գոշա և	44	Պէյքօղ և Ղալաթիա	
Գուճգափուի դուրս	ԻԵՍԿՐՈՒՄԱՐ Ս. Խաչ	68 Յ. Մէրեէմ—Գուլի	
21 Գրիգոր Պէրպէրեան	45 Յովհաննէս Շահեան Բ.	(Գ. ՎիճԱԿ)	
Բ. Բացակայութիւն առաջին	46 Յովսէփ Ս Մաղլումեան Բ. Պ	Ղուզղունճուք և Իճատիէ	
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ	47 Սերոբէ Պասմաճեան Բ. 2	69 Յովհաննէս Խոսեան	
Բ. Պ Բաց. բանաւոր սլատճառ :	48 Ստեփան Ասլանեան	70 Ստեփան Պէյլիճեան Բ.	

Գատըգիւղ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Կարապետ Շահպաղեան Բ. 2	Կարին	121 Ստեփան Պ. Պ. Փափաղեանց
72 Մկրտիչ Մուրատեան Բ. Պ	101 Մանուկ Ասլանեան Բ. Պ	122 Տիգրիկ
Նարլըղ ափու	Քէօթաշեա	123 Զէյթուն և Մարաշ
73 Յակոբ Եկմէնիճեան Բ. Պ	102 Մ. Փափաղեան Տօքթօր	124 Տրապիզոն
Եկմէնիճեան Սամաթիոյ	Աղբիւնուպօլիս	125 Պաղտատ
74 Օղսէն Խօճասարեան Բ.	103 Ռուբէն Կիւմուշկէրտ. Բ. Պ	126 Տիգրանակերտ
Թօփղափու	Նիկոմիդիա	Վան
75 Էյուպ Ս. Եղիա և Ս. Աստուածածին	104 Ակն	127 Սիմօն Մաքսուտեան Բ. Պ
76 Գարեգին Յ. Մէլիքեան	105 Պետրոս Միսաքեան	128 Աղթամար
Գուրուշէլէ	Գարահիսար	129 Հալէպ և Այնթապ
77 Ասափա Իկիւպաղեան Բ.	106 Արաբկեր	130 Սերաստիա
Հիսար և Պոյաճի գիւղ	Կարապետ Խաչիկեան	131 Մկրտիչ Մէլիքեան
78 Յովհաննէս Նուրեան Բ.	107 Բաղէշ	Ռուսճուխ
Նոր գիւղ և Սթէնիա	108 Պրուսա	Կարս
79 Ղազար Հովուեան	109 Ք. Ղազարուսեան	132 Արրահամ Յ. Այվաղեան
Պալատ	Եւզոկիա	Զմէկածաղ
80 Մկրտիչ Գ. Էսաեան	110 Մեղքոն Հալաճեան Բ. Պ	133 Համբարձում Սարքէշիչ. Բ.
81 Յովհաննէս Կրճիկեան	Ամասիա	Գաղատիա
82 Գարակիճօրիւկ	111 Համբարձում Ալաճաճեան	134 Ատանա
83 Յարութիւն Զէնճիրճեան Բ. Պ	Բալու	135 Աղղերդ
84 Յարութիւն Գ. Տատեան Բ. Պ	112 Յովհաննէս Աղնաւոր Բ. 2	136 Մատթէոս Ալիքսանեան
(Ե. ՎեճԱԿ)	Եղեսիա	Եօզզատ
Սամաթիա	113 Յակոբ Իւթիւճեան	137 Լօղօֆէթ Պալեօղեան
85 Ալիքսան Պէշիրեան Բ. Պ	Մանճըլըի	Մալաթիա
86 Աւետիս Քօրջեան Բ.	114 Հաճըն	138 Իզմիր
87 Եղիազար Մեղիքեան Բ. 3	115 Երզնկա և Բարերդ	139 Եղիպտոս
88 Մինաս Ճաֆճաֆեան Բ. 2	116 Թէքիրտաղ	140 Յովհաննէս Յովակիմեան
89 Յակոբ Քաղաղեան	117 Տիգրան Գ. Սինանեան Բ. 2	
90 Յակոբ Ամասեան	Կեսարիա	
91 Նազարէթ Շահպաղեան Բ. Պ	118 Խարբերդ	
92	119 Յովհան Եաղճեան	
93	Պալքէսէր	
94 Խասգիւղ	120 Յովհաննէս Յովակիմեան	
95 Աւաքել Ալթուն Տիւրրի Բ. 2		
96 Խաչատուր Պ. Միսաքեան Բ.		
97 Ռէթէոս Պէլիկճեան		
98 Սարգիս Արապեան Բ. 2		
99 Սարգիս Արրահամեան Բ.		
100 Սիմօն Միքայէլեան		

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. Տեղեկութիւն Գործարարութեան Գործարարութեան Ինքնուրույն.
 Բ. Վերահսկողութեան Սահմանադրութեան. շարահանութեան վեճաբանութեան յօդուածայ
 Թաղիւն Գործարարութեան, Երբեք ընթերցան :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ատեանը բացուեցաւ ժամն 7 1/2 ին
 ի ներկայութեան 51 երեսօտիսանաց, ու
 ընդ վերջին թիւը յանդեցաւ 55 ի :

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրը
 տկարութեան պատճառաւ բացակայ ըլ-
 լալով՝ Գիւանին առաջարկութեան և ժո-
 ղովին կամաց համեմատ՝ Տ. Մատթէոս
 Եպիսկոպոս Իզմիրեան նախագահեց ժո-
 ղովին :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խօսք կուտամ
 Ատենադպիր Էֆէնտիին՝ նախորդ նստե-
 րու ատենադրութեանց մասին բացատ-
 րութիւն տալու համար :

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ. — Տասնուվեցերորդ
 նստի ատենադրութիւնը տպուած պատ-
 րաստ էր. կը յուսայի որ մինչև հիմա գար,
 բայց չեկաւ. թերևս մէկ քառորդէն կու-
 գայ : Իսկ ժէ. նստին ատենադրութեանը
 դալով՝ թէև մեծ մասամբ տպուած է,
 բայց չէ աւարտած տպարանի փոփոխու-
 թեան պատճառաւ, որն որ ներելի կըր-

նայ ըլլալ այս առաջին անգամին համար-
 սակայն ես կառաջարկեմ որ յաջորդ նիս-
 տին 5 շաբաթէն ըլլայ միայն մէկ ան-
 գամու համար, որպէս զի ետ մնացած
 վերջին ատենադրութիւնը հասնելով ա-
 մենը մէկէն վաւերացուին :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կառաջար-
 կեմ որ վերջին նիստի ատենադրութեան
 ձեռագիրը կարդացուի :

ՓԱՓԱՉԵԱՆ Ս. ԷՖ. — Եթէ վերջին
 նստին ատենադրութիւնը պիտի կար-
 դացուի, անկէ առջի ժՁ. նստինն ալ
 պէտք է կարդացուիլ. եթէ մէկին հրա-
 տարակութիւնը չհասնելուն համար ըն-
 թերցումն օրինաւոր է, ինչո՞ւ միւսինն ալ
 մի և նոյն պատճառաւ օրինաւոր չըլլայ :
 Բայց ես չեմ կրնար ըմբռնել թէ ինչո՞ւ
 դեկտեմբեր 10 ի նստին ատենադրու-
 թիւնը մինչև ցարդ չհրատարակեցաւ :
 Բացատրութիւն կը խնդրեմ դիւանէն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Լսեցիք Ատե-
 նադպիր Էֆէնտիի տուած բացատրու-
 թիւնը. դժբաղդարար ժՁ. նստի ատե-

նագրութիւնը չէ՛ կրցեր հրատարակուիլ և ցրուիլ ժամանակին, և այսօր զայն ձեռքերնիս չունենալով՝ քանի՛ որ անոր պարունակութեանը պիտի չկրնանք տեղեկանալ և վաւերացունել, ինչ օգուտ կրնայ ընել ժ.է. ի ձեռագրին ընթերցումին. ուստի եթէ պէտք ըլլայ, սոյն ձեռագրէն ընթերցմամբ տեղեկութիւն քաղելու պայմանաւ, վերջին երկու նստերուն ատենագրութեանց վաւերացումն առաջիկայ նստին կը թողումք:

Իսկ յաջորդ նիստն Յ շարաթ յետաձգելու մասին Ատենագրութիւնէն ընդ մեզ ատենանի փակման պահուն կրնայ որոշուիլ: Հիմայ կանցնինք ատենական միւս դործողութեանց:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Խօսք կուզեմ. եթէ չհրաւիրէիք Ատենագրութիւնէն բացառութիւն տալու, ևս չէի պահանջէր զայն. նախընթաց նստին մէջ Ատենագրութիւնէն ատենագրութեանց տպագրութեան խնդրոյն առթիւ անմարսելի խօսքեր ըրաւ երեսփոխանացս համար. կը պահանջեմ որ կրկնէ այսօր նոյն խօսքերն՝ վարչութեան ներկայ եղած պահուն, այն ինչ անցեալ նստին ներկայ չէր վարչութիւնը. կուզեմ գիտնալ թէ վարչութիւնն ալ համամիտ է արդեօք այն խօսքերուն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Փափագեան է՝ ֆէնտի ըսած խօսքերը թէ և ատենագրութեանց նկատմամբ, սակայն մասնաւոր պարագայից կը վերաբերին. օրինակի համար՝ ատենագրութեանց մասին եղած խոստման չկատարուիլը, վարչութեան համամիտ ըլլալը կամ չըլլալը, եւ, ասոնք զատ խնդիրներ են. թող ներքէ փափագեան էֆէնտին որ չյուզենք առայժմ այսպիսի մանր խնդիրներ, վասն զի ժամանակը չէ:

4.

ԲԱՅԱՎԱՅՈՒԹԻՒՆՔ

Ատենագրութեան անձնական տկա-

րութեան պատճառաւ բացակայ գտնուող քանի մի երեսփոխանաց անունները թուելէ ետեւ, որք են՝

- Տ. Հմայեակ վարդապետ Գիմարսեան,
- Տ. Արիստակէս քահանայ Մամբրէեան,
- Նազարէթ էֆէնտի Կահուազ,
- Մելքոն » Հալաճեան,
- նշանակել տուաւ ներկայութեան տուամարին մէջ:

2.

ՆՊԵՆՏ ԲԱՅԱՎԱՅՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժողովոյս վերջին նիստին մէջ՝ ատենագրութեանց հրատարակութեան խնդրոյն առթիւ մեր ընկերներէն Օ. էֆէնտի՝ Ազգ. վարչութեան ընթացքը սողտանելով՝ անարդանաց քուէ առաջարկելու միջոցին՝ էրեւոյնէն ըստ մ'արտասանեց ուղղեալ առ նոյն ինքն վարչութիւնն:

Սոյն բառը բեմական լեզուի բնաւին անվայել և Ազգային դործոց մէջ մեզ պաշտօնակից մարմնոյ մը նախատինք ըլլալով, կանոնադրութեան պատճական տրամադրութիւնը կը հրաւիրէր անզոյչ ատենախօսին վրայ: Չեր ատենապետը նոյն պահուն այդ ցաւալի խօսուածքին անվայելութեան աստիճանէն զայնթակեալ, թերևս և շուարեալ, միւս կողմէն՝ մեր ընկերին պատճոյ աստիճանը թեթեւցունելու գիտմամբ՝ քաղաքավարութեամբ յորդոր կարգաց նմա յետս կուշել այն նախատական բառը: Եւ թէպէտ մեր ընկերը յետ կրկին և երեքկին յորդորանաց անուղղապէս ետ առնել նկրտեցաւ, սակայն նախատինքը մեծ ըլլալով, չէր կրնար զինքը բոլորովին գերծառնել կանոնադրական պատճէ:

Աւստի մտադիր էի այսօր այն պարագայից համար հարկ եղած կանոնական պատիժը՝ որ է յանդիմանութեան քուէ առաջարկել, որ դուք պիտի վճռէք առանց վէճի. բայց գիտնալով որ չէք հաճիր՝ առանց մեր ընկերը լսելու՝ որ ըստ կանոնաց իրաւունք ունի խօսք առնուլ զինքն

արդարացունելու համար, վճիռ դատաւարութեան արձակել, և ըստ որում ինքն ներկայ չէ այսօր, խնդիրը կը ձգենք առաջիկայ նստին և կանցնինք մեր ուրիշ ատենական դործոց:

Հիմա այս առթիւ վարչութեան Քաղ. ժողովէն զիր մ'եկած է. այն ալ կարդանք և անցնինք մեր դործողութեանց:

Չայս ըսելով Ատենագրութեան փառացի Քաղ. ժողովոյ նամակն՝ որ է.

Վսեմափայլ Ատենագրութեան Ազգ. երեսփոխանական ժողովոյ.

Ազգային ժողովոյ վերջին նիստին մէջ երեսփոխաններէն մին՝ Օգսէն էֆէնտի Խօճասարեան, ատենագրութեանց տպագրութեան խնդրոյն առթիւ օրինաւոր քնննադատութեան սահմանէն շեղելով գլխովին, բեմական բարբառի անվայել լեզուով վարչութիւնը անարգած և հայհոյած է անոր դէմ:

Ազգ. վարչութեան Քաղաքական ժողովն իւր պաշտօնն Ազգային ժողովէր ընդունած՝ իւր արժանապատուութեան դէմ եղած այս անարգանաց համար պատկառելի ժողովոյց զիմելով՝ արժանաւոր հատուցում կը խնդրէ, և վստահութեամբ կ'սպասէ որ Ազգային ժողովն իւր վարչութեան պատին ու բարոյական ազգեցութիւնը յարգել տալու համար զարժանն անյապաղ 'ի գործ դնէ:

10 յետ. 1877 Մնամք յարգանք ի Պարբի. Հայոց 'ի զիմաց Քաղ. ժողովոյ Կ. Պօլիս Ազգ. վարչութեան վասն Ատենագրութեան փոխ. Ատենագրութեան Գ. Վ. Ք. Սեւոս Գրեան

ՄԵՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Գ. ԷՖ. — Խօսք կը խնդրեմ գիտողութեան մը համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս խնդրոյն վրայ խօսք տալու հարկ չեմ տեսներ, խնդիրն ամբողջ յառաջիկայ նստին ձրգուած է:

ՄԵՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Գ. ԷՖ. — Չհասկըցած մէկ կէտիս համար խօսք և հարցում մը պիտի ընեմ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Խօսք կուզեմ:
ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներեցէք, Մէրեւէմ-Գուլի էֆէնտի, այսօր ոչ հարցում, ոչ բացատրութիւն և ոչ որ և է խօսք չը կայ այս նիստին վրայ. յառաջիկայ նստին ժողովն իւր վճիռը պիտի տայ. ինչն է կը պնդէք. եթէ մեք այստեղ ժողովուեր ենք ոչ թէ ազգին դործերը տնօրինելու, այլ անձնական կրքերնիս յագեցունելու համար, աւելի աղէկ կրնանք ձգել տեղերնիս երթալ, որով գէթ բարեկամութիւնիս անտխտեղ կը պահուի:

ԵՍԱՆԱՆ Մ. ԷՖ. — Եւ եթէ Օգսէն էֆէնտի յաջորդ նստին շնորհայանայ, ինչ պիտի ընենք:
ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այն ատեն կը մտածենք՝ ինչ պէտք է ընել:
ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես ալ խօսք խնդրեցի կանոնական գիտողութիւն մը ընելու համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Չեմ կրնար և ոչ մէկու մը խօսք տալ այս նիստին վրայ:

3.

ՀՐԷՄԵՐԷԷՆ ԵՆՏԻՍ ԱՐԵՎԷՆ ԳՐԵՆՆԻՆ

Ատենագրութեան փառացի Քաղաքան Պատրիարքի կողմէն եկած հետեւեալ հրաժարագիրն ու նամակը.

ՀՐԷՄԵՐԷԷՆ

Վսեմաշուք Ատենագրութեան Ազգ. Ընդհ. երեսփոխանական ժողովոյ.

Անձիս տկարութեան պատճառաւ չը կրնալով այլ ևս Պատրիարքութեան գրծաւորին պաշտօնը պատշաճապէս և արժանապէս վարել, կը խնդրեմ կը պաղատիմ և թախանձագին կ'աղաչեմ որ այսօր ուրիշ մը ընտրէք փոխանակ իմ, քանզի մինչև ցարդ քանիցս տուած հրաժարականներս չընդունելովսից՝ ուրիշ բան չըրիք բայց միայն ազգին դործերը բարիօք տրտեսութենէ զրկելով պարտոյ ժամանակ անցունել տալու պատճառ եղաք, մինչդեռ

իմ տեղս ազգասէր և առողջ անձ մ'ընտ-
րելով մեծամեծ արդիւնքներ կարող էիք
ձեռք բերել: Ազգին կամբը յարգել
պարտքս է, բայց անկարելին ալ չպա-
հանջել ձեր պարտքն է:

Քաջայոյս եմ որ այլ ևս չէք կրկնել
տար այսպիսի դիր գրել պատկառելի ժո-
ղովոյդ, որուն իմ յարգանքներս մատու-
ցանելով

1877 թիւոր. 11 լաւութեան ազգիս
Բերա Ներ-է- Ար-է-ի-դ-

Ն-՝-՝

Առ Պատկառելի Ընդհանուր Ժողովն
Հայոց .

Վսեմ: Ատենապետ Ստեփան փաշա.

Եկեղեցական համագումար ժողովոյ
անդամակիցք մեծագոյն մասամբ և ըս-
տորագրութեամբք՝ ժողովոյ համար մը-
նայուն դիւան ունենալ որոշած են. տես-
նելով և մեր եկեղեցական հարց բաղ-
ձանքը՝ մինչև յառաջիկայ մայիսի համար
ըրած դիւանական ընտրութիւններն ըն-
դունեցինք: Ոմանք կը պնդեն թէ՛ Սահ-
մանադրութեան դէմ է այս որոշումը .
ուստի կը խնդրեն որ Ընդհանուր Ժողովդ
իւր կարծիքը յայտնէ այս մասին թէ՛ Հա-
մագումար ժողովոյ մնայուն դիւան ու-
նենալը Սահմանադրութեան դէմ է կամ
համաձայն:

Յուսալով որ պատուական ժողովդ կը
բարեհաճի իւր իմաստութեամբը Սահմա-
նադրութեան սոյն տրամադրութիւնը
պարզել, Մնամ ընդմիջտ ազօթարար

1877 թիւոր. 8 Պ. Կ.
ի Պատր. Հայոց Ներ-է- Ար-է-ի-դ-

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Խօսք կուզեմ
Ս. Պատրիարքի հրատարագրի մասին:

(Այս միջոցին ատենարան էֆէնտին
կարգաց կանոնադրութեան 87 բղ յօդ-
ւածն՝ որ է.)

« Եթէ Պատրիարք Սրբազանը զիւր հը-
րատարականը տայ, պատճառարանեալ

պէտք է ըլլայ այդ հրատարագիրը: Ժո-
ղովը յետ ընթերցման՝ ատենապետաց
դիւանին նախաքննութեանը կը յանձնէ
հրատարագիրը, և այս դիւանին եզրա-
կայութեանը վրայ՝ պատճառները քըն-
նելով կընդունի կամ չընդունիր առա-
ջարկեալ հրատարումը: Եթէ չընդունի,
պատճառարանեալ կը հաղորդէ զիւր ո-
րոշումը Պատրիարք Սրբազանին, որում
միայն կը մնայ որոշել իւր ընելիքը »:

Ուրեմն կանոնադրութեան սոյն տրա-
մագրութեան համեմատ կառաջարկեմ
ատենապետաց դիւանին յղում և անցնիլ
անմիջապէս օրակարգին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ ուրիշ դի-
տողութիւն ընող չկայ, Փափազեան է-
ֆէնտի սուաջարկութեան համեմատ՝ կը
յղենք Ս. Պատրիարքի հրատարագիրն ա-
տենապետաց դիւանին: Գալով Ս. Պատ-
րիարքի միւս գրին՝ որ Համագումար ժո-
ղովոյ մնայուն դիւանի խնդրոյն կը վե-
րաբերի, այս ալ՝ ըստ որում կանոնական
խնդիր է, և նախաքննութեան կարօտ,
պէտք է յղել Նախաձեռնութեան դիւա-
նին:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ըստ որում Ս.
Պատրիարքը հրատարական զրկած է, և
եթէ հրատարած չըլլար ինք պէտք էր
ներկայացնել այդ առաջարկութիւնը, ուս-
տի օրաձգել կառաջարկեմ մինչև հրատա-
րականի խնդիրը լուծուի:

Տ. ԽՈՐԷՆ Վ. ԿԻՐՕԵԱՆ. — Կը ձայ-
նակցիմ Փափազեան էֆէնտիին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ որում Ս.
Պատրիարքն իւր հրատարականէն 3 օր
առաջ գրած է այս նամակը, ըստ իմ
կարծեաց Նախաքննութեան յղելով, մէկ
կողմէն խնդիրը քննութեան ենթարկած
կըլլանք, միւս կողմէն բնականաբար օ-
րաձգած:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կանոնական դի-
տողութիւն ունիմ այս մասին. անցեալ
նստին բացակայ երեսփոխանի մը զրկած
գրաւոր առաջարկութեան առթիւ դիտո-
ղութիւն եղաւ թէ՛ ընդունելի չէ այն՝

բայց եթէ իւր ներկայութեան ատեն:
Հիմա Սրբազան Պատրիարքի հրատարած
միջոցին և իւր բացակայութեանը տուած
մէկ առաջարկութիւնն եթէ Նախաքնն-
ութեան յղեմք, կանոնական սխալ մը
գործած չե՞մք մի ըլլար. այս կուզեմ
հասկնալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սխալ կը գոր-
ծենք եթէ կարծիք ընենք որ Ս. Պատրի-
արքը նոր առաջարկութիւն կընէ. Սրբա-
զանն իւր Պատրիարքութեան օրով պա-
տահած դէպքի մը առթիւ հարցում կը-
նէ և կուզէ հասկնալ միայն թէ արդեօք
Սահմանադրութեան համաձայն է այն .
ուստի արդեւք չեմ տեսներ խնդիրը Նա-
խաքննութեան յղելու:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կըսէք թէ իբր
Պատրիարք դիտողութիւն կամ հարցում
մը կընէ և բացատրութիւն կուզէ ժողո-
վէն թէ արդեօք Համագումար ժողովոյ
մնայուն դիւանի կազմութեան արտօնու-
թիւն տալով Սահմանադրութեան համա-
ձայն վարուած է թէ ոչ: Ես դարձեալ
կըսեմ թէ քանի որ Ս. Պատրիարքը հրա-
տարած է, այս հարցումը պէտք է մնայ
մինչև իւր հրատարական խնդրոյն լուծուի-
լը, և՛ եթէ հրատարականը ետ չառնու՝
իւր յաջորդին կը մնայ այդ խնդիրը:

Տ. ԽՈՐԷՆ Վ. ԿԻՐՕԵԱՆ. — Կը հար-
ցընեմ դիւանին, միթէ իբրև Պատրիարք
ստորագրած է այդ գիրը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այո՛, իբրև
Պատրիարք ստորագրած է և իւր հըրա-
տարագրէն՝ որ այսօրուան թուականը կը
կրէ, 3 օր առաջ գրած է այս նամակը:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Խօսք կու-
զեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ Փափազ-
եան էֆէնտիի համաձայն պիտի խօսիք,
նախ պէտք է հակառակ կողմէն եթէ խօ-
սող կայ, այն լսենք: (Քիչ մը ժամանակ
սպասելէն ետքը շարունակելով.) Եւ ըստ
որում ուրիշ խօսք ուզող չկայ, խօսքը Քը-
րիստոստուր էֆէնտիին է:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Սահմանա-

դրութեան մէջ չկայ այնպիսի կէտ մը՝
որոյ համեմատ Ազգային ժողովը կարե-
նայ Համագումար ժողովոյ համար գիծ
մը դնել կամ որոշել. Համագումար ժո-
ղովն անկախ է Ազգային ժողովէն. ա-
նոր գիտնալիք բանն է իւր դիւանը տա-
րեկան կամ առժամանակեայ կազմել:
Այս էր ըսելիքս:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քանի որ դեռ
բունխնդրոյն վրայ բացուած չէ վիճարա-
նութիւն, աւելորդ է խօսիլ անոր վրայ .
պէտք է խօսիլ միայն այն կէտին համար
թէ արդեօք օրաձգե՞լ պէտք է թէ ոչ
նախաքննութեան յղել: Այս մասին ո-
րովհետեւ երկու կարծիք երևան ելաւ,
պէտք է որ քուէի դնեմ երկուքն ալ:

Չայս ըսելով Ատենապետ փաշան քը-
ւէի դրաւ հետզհետէ. Ա. Նախաքննու-
թեան յղելու առաջարկութիւնը. և Բ.
պարզապէս օրաձգման առաջարկութիւնը:

Ժողովը միաձայնութեամբ Օրաձգումն
ընդունեց:

ՅՐԷՆԿԵԱՆ Մ. ԷՖ. — Հրատարակա-
նի խնդիրն ի՞նչ եղաւ. կը խնդրեմ որ հը-
րատարագիրը կարդացուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Հրատարագիրն
անգամ մը կարդացուեցաւ և լսեցիք. ա-
ռաջարկութիւն եղաւ ըստ կանոնի՝ ատե-
նապետաց դիւանին յղել նախաքննու-
թեան համար, և որովհետեւ հակառակ
խօսող մը չեղաւ, յղումն ընդունուած հա-
մարուելով խնդիրը վերջացաւ: Կը մնայ
հրատարագիրը վերստին կարդացուելու
կէտն, որու արդեւք մը չունինք, թող
անգամ մ'ալ կարդացուի:

Այս պահուս Ատենապետը էֆէնտին
կարդաց վերստին Սրբազան Պատրիարքի
հրատարագիրը:

4.

ՏԵՂԷՒՄԷՆ ԵՐԷՒՄԻՆԻՆԻՆ ԸՆԴՈՒՆԵԼԻՆԵՅ

Ատենապետ փաշան ժողովին ներկա-
յացուց Տիգրանակերտու և Տիվրիկի վի-
ճակաց դաւառական երեսփոխանաց ընտ-
րութեան վերաբերեալ երկու տեղեկա-

գիրներն, որք Պատրիարքական ծանօթագրով մը Գիւանին մատուցուած էին, և կարգացուեցան՝ որք են.

Ա.

Տեղի-դէր Տեղի-ն-ի-բ-ր-ո-ւ-մ

Ամեն. Արքայան հայր հոգևոր.

Թիւ 42 և ներկայ ամսոյս 3 թուոյն գրեալ և առ ժողովս ուղղեալ պաշտօնական նամակ Ձեր Ամենապատուութեան ստացաք, որն որ Չօպանեան Միհրան էֆէնտոյ յերեւոթականութիւն ընտրուելու մասին զրկածնու տեղեկագրին մէջ ընտրական քննիչ յանձնաժողովոյ նկատած թերութիւնքն ծանուցանելով լրացումն կը պահանջուէր:

Հ-բ-ր-ո-ւ-մ

1. Գաւառական ժողովոյ անդամոց և քուէարկուաց թիւն.
2. Ընտրելոյն ստացած քուէից թիւն.
3. Գաւառական ժողովոյ անդամոց հետ նախագահի ստորագրութիւնը:

Պ-բ-ր-ո-ւ-մ

1. Ժողովոյս անդամոց թիւն արդէն յայտնի է, բայց նոյն նստին ներկայ եղող և քուէարկուաց թիւն էր երկուստան.
2. Ընտրելին ինը քուէ ստացաւ.
3. Ժողովոյս անդամոց հետ առ անգամ նախագահն ալ ՚ի ստորև ստորագրած է:

Ահաւասիկ ըստ բարձու հրամանի Ձեր Ամենապատուութեան՝ պահանջեալ կէտերն ներկայիս նշանակելով կը ներկայացնենք Ձեր ազգասիրութեան. ալ կը մնայ Ձեր բարեհաճ կամաց օր և ժամ յառաջ յիշեալ էֆէնտոյ յանուն Տիգրանակերտի երեսփոխան ընդունիլն և վաւերացումն:

Մնամք միշտ բարձր հրամանի Ամենապատուութեանդ ակնդէտ ՚ի դիմաց գաւառական ընդհ. ժողովոյ Տիգրանակերտի

Ատենաղպիր Ատենապետ

Յօհանէ-Գալուշ-Յիւն Մ. Թ-վ-մ-Մեհ-Մեհ-Մեհ

Սոյն քուէարկութիւնն և երեսփոխանի որոշումն մեր ներկայութեանը լինելուն կը կնքեմք.

Առաջն. Գիւանորդ 1876 զեկտ. 22 Տիգրանակերտի յԱռաջն. Հայոց Տ. Յօհանէ-Մեհ-Մեհ ՚ի Տիգրանակերտ

Բ.

Տեղի-դէր Տեղի-ն-ի-բ-ր-ո-ւ-մ

Բարձրաշնորհ Պատրիարք Արքայան հայր և Վսեմաշուք էֆէնտիք Ազգ. ընդհ. վարչութեան.

Ձեր Բարձր Արքայանութեան յունիս 19 թիւ գրութիւնն ընկալաք, որով գաւառիս կողմանէ ցուցուած երեսփոխանի մասին հինգ օրինական պայմաններու յայտնուած չլլալն յիշելով սոցա կատարելութիւնը կը պահանջէիք:

Որոց առաջնոյն համար կը պատասխանեմք թէ ՚ի դիմաց Պատրիարքարանիդ երեսփոխանի ընտրութեան մասին այդ օրինակ մասնաւոր հրահանգ մի ստանալու չեմք բաղդաւորած. — Բ. ին և այլոց համար թէ և քուէարկութիւնը գաղտնի կատարած եմք ըստ օրինի Սահմանադրութեան, սակայն ՚ի զգուշութիւն ձանձրութեան Ձերդ Վեհութեան չէինք մանրամասնած. բայց այժմ այդ օրինակաւ պայմանները լրացնելու հարկը տեսնալով ահա առաջի առնումք: Ըստ թուոյ գաւառական ժողովոյ 21 ընտրող ժողովականաց երեք անձանց վերայ գաղտնի քուէարկութեամբ ընտրութիւնը կատարուեցաւ, որոց առաջինը՝ այն է արդէն յիշեալ ՚ի Մէրճանն գրավաճառ Նշանիկ էֆէնտին նոյն 21 թուոց քուէարկուաց 17 քուէին արժանաւորելով՝ ըստ օրինի տեղւոյս ներկայացուցիչն լինելու իրաւանց տիրացած է:

Վասնորոյ և մեք յօժարութեամբ սրբտի յիշեալ էֆէնտին Տիգրիկոյ օրինաւոր երեսփոխանն ճանչելով և ընդունելով՝ կը խնդրեմք վեհ ժողովէդ որ բարեհաճիք վաւերացունել Նորին պաշտօնը ՚ի համազօր իշխանութիւն և յանդամակցութիւն

Ազգ. Ընդհ. երեսփոխանական ժողովոյ ՚ի յառաջադիմութիւն գաւառիս:

1876 օգոստ. 14 Մնամք անձնուէրք ազգիս ՚ի Տիգրիկ ամենախոնարհ ծառայք Փոխանորդ Առաջն. Տ. Պ-բ-ր-ո-ւ-մ

Ատենաղպիր Ատենապետ
Թ-բ-ր-ո-ւ-մ Մ-վ-ի-ն-ն Ս-բ-ի-ն-Մեհ-Մեհ

Գ.

Մ-ն-ի-ն-ի-ն Ս-բ-ի-ն-ն Պ-բ-ի-ն-ն-ի-ն

Վսեմախալ Ատենապետ փաշա ազգային երեսփոխանական ժողովոյ.

Ազգային ժողովէն պակասած Տիգրանակերտի և Տիգրիկի վիճակաց գաւառական երեսփոխանաց տեղ նոր ընտրութիւն կատարուած և տեղեկագրերը գաւառական ժողովոց կողմէն հասած ըլլալով, Պատրիարքարանս քննեց ընտրելոց սահմանադրական հանգամանքը և Սահմանադրութեան համեմատ գտաւ: Ըստ այսմ Տիգրանակերտէն երեսփոխան ընտրուած է Միհրան էֆէնտի Չօպանեան և Տիգրիկէն Նշան էֆէնտի Գարագաշեան:

Սոյն ընտրելոց յանձնառութիւնն ալ ապահովուած ըլլալով, գաւառական ժողովոց տեղեկագրերուն հետ ներկայ ծանօթագիրս կըմատուցանեմք Ազգային ժողովոյ ՚ի վաւերացումն:

10 փետրվար 1877 Մնամք աղօթարար ՚ի Պատրք. Հայոց Պ. Կ. Ներսէ-Արեւ-Կ. Պօլիս

Յետ ընթերցման Ատենապետ փաշան ՚ի դիտողութիւն հրաւիրեց երեսփոխանները նախ Տիգրանակերտի գաւառական երեսփոխանի ընտրութեան տեղեկագրին վրայ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Դիտողութիւն ունիմ կէտի մը վրայ. տեղեկագրը՝ գաւառական ժողովոյ ներկայ անդամոց և քուէարկուաց թիւը 12 է կըսէ. բայց ժողովոյն անդամոց ընդհանուր թիւը չյիշատակեր և Պատրիարքարանիդ յայտնի է ըսելով կանցնի. պէտք էր նշանա-

կել թէ ՚ի նշ պատճառաւ պակասած է գաւառական ժողովոյ անդամոց թիւը, քանի որ Պատրիարքարանն ալ հարցուցեր է. որովհետեւ գաւառական ժողովոց անդամոց թիւն ըստ տեղւոյն 21 էն մինչև 70 կրնան ըլլալ ըստ գաւառական հրահանգի վարչութեան:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քանի որ տեղեկագիրը կըսէ թէ Պատրիարքարանի դիւանատունը գիտէ Տիգրանակերտի ժողովոյ անդամոց թիւը, նորէն Տիգրանակերտ գրել հարցնելն աւելորդ է և անվայել. կրնանք Պատրիարքական դիւանատունէն խնդրել պատասխանը. բայց ըստ որում մանր պարագայ մ'է այս, թերևս այժմ ոչ ոք կրնայ յիշել և զեկուցանել մեզ. հարցնեմք դիւանապետին. եթէ կը յիշէ՝ թող պատասխանէ մեզ:

Այս միջոցին դիւանապետը տեղեկութիւն տուաւ թէ Տիգրանակերտի գաւառական ժողովոյ անդամոց թիւը 21 է:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Պատրիարքարանը 3 հարցում ըրեր է, ինչպէս կերևի տեղեկագրէն. հարցումին մէկն այն է թէ քանի է գաւառական ժողովոյ անդամոց թիւը. ըսել է թէ Պատրիարքարանը չգիտեր եղեր և հարցնել հարկ տեսեր է: Բժախնդրութեան համար չէ ըսածնիս. քանի որ Պատրիարքարանը հարկ դատեր է հարցնել, պատասխանն ալ պէտք էին տալ. չտալինն պակասութիւն է:

ԻԿԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Իբրև անդամ ընտրական քննիչ յանձնաժողովոյ վարչութեան՝ քանի մի խօսքով պարզեմ խորհրդ: Սովորութիւն է ընտրական տեղեկագրոց մէջ յիշատակել թէ ժողովին այսչափ անդամներէն այսչափին ներկայութեամբ և քուէովն ընտրութիւնը կատարուեցաւ. սակաւ ընտրական տեղեկագրոց համար օրինական ձև մ'է: Տիգրանակերտէն եկած նախորդ տեղեկագրին մէջ յիշուած չէին այս կէտերը. անոր համար հարցնել տուինք. այժմ եկած պատասխանին մէջ կըսէ թէ արդէն թիւը յայտնի է. և յիշուի գաւառական ժո-

զովոյ կազմութեան տեղեկագրէն յայտնի եղած է անոր անդամոց թիւը . ըսել է թէ տեղեկագրին օրինական թերութիւնը լրացած է արդէն , որով կատարուած երեսօխոսանական ընտրութեան վաւերացման համար արդեւ մը չէ մնացած :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Մեր ընտրական յանձնաժողով չեմք ճանչնար պաշտօնապէս . բայց տեղական տեղեկագրին և Պատրիարքական վկայագիր ունինք ձեռքերնիս , անոնք պէտք է քննենք . հիմա լսեցիք ասոնց վրայ տրուած բացատրութիւնը . ուստի քուէի կը դնենք Տիգրանակերտի մէջ կատարուած ընտրական գործողութիւնը . ով որ վաւերական կը դատէ , ձեռքը վեր վերցնել չնորհ ընէ :

Ժողովը 1 քուէի հակառակ ամենամեծ մասով ընդունեց և վաւերացուց 20 պանեան էֆէնտի ընտրութիւնը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Տեղեկագիրը պակասաւոր կը դատեմ , բայց ոչ ընտրութիւնն անվաւեր :

Յետոյ՝ Ատենապետ փաշան Տիգրիկի գաւառական երեսօխոսանի ընտրութեան տեղեկագրին վրայ ալ ՚ի դիտողութիւն հրաւիրեց երեսօխոսանները . սակայն տեսնելով որ դիտողութիւն ընող չկայ , անմիջապէս դայն ալ քուէի դրաւ , որ միաձայնութեամբ ընդունուեցաւ ժողովէն :

Հետևապէս՝ ըստ վճռոյ ժողովոյն երեսօխոսան հոչակուեցան՝

Միհրան էֆէնտի Զօպանեան
Նշան » Գարագաշեան .

5.

ՏԵՂԷԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ատենական գործողութիւննիս կնքելէ առաջ պարտք մը ունիմ կատարելիք : Անցեալ նստին՝ ժողովը յանձնարարութիւն մ'ըրած էր ինձ , կուզեմ անոր վրայ ձեր ուշադրութիւնը հրաւիրել . կը յիշեք անշուշտ որ մեր ընկերներէն էֆէնտի ընտրութիւնը

մը զրկած էր աստ՝ յայտնելով թէ իւր երեսօխոսանական պատուոյն դէմ անարգանք մ'եղած է . այս խնդրոյն համար գրեցի նմա և մանր պարագայիւք տեղեկութիւն խնդրեցի և ստացայ , զոր երկու խօսքով կրնամ յայտնել ձեզ :

Նախկին Մեծ Եպարքոս Միտհաթ փաշային մեր Պատրիարքարանն այցելութեան եկած օրն էֆէնտի ընտրութեան յոր մերձենալով կըսէ թէ Քաղ. ժողովոյ ճառը չպիտի կարդացուի : Նորին Սրբազնութիւնն ալ մեր ժողարար ըսեր է թէ դու ո՞վ ևս և ի՞նչ իրաւամբ կը խօսիս . և վերջապէս՝ ըստ էֆէնտի ընտրութիւնն , անպիտան բառն ալ արտասաներ է : Ահա այս կէտն է որ էֆէնտի ընտրութիւնն իւր երեսօխոսանական պատուոյն արատ համարելով բողոքելու նիւթ ընտրած է իրեն : Իսկ միւս կողմէն ստուգեցի որ Եպարքոսին դալու վրայ եղած ատեն՝ այն ինչ Ս. Պատրիարքըն ոտքի վրայ կը շտապէ իջնալ զնա դիմաւորել , նոյն շիտիութեան մէջ էֆէնտի ընտրութեան Նորին Սրբազնութեան կը մերձենայ և չդիտենք ի՞նչ իրաւամբ յանուն երեսօխոսանութեան խօսելով , կը բողոքենք , չենք ընդունիր եւ խօսքեր կընէ : Նորին Սրբազնութիւնն ալ՝ առանց անոր ով ըլլալը ճանչնալու ժամանակ ունենալու , մերժողական պատասխան տրուեր է թէ և , սակայն անարգական բառ արտասանած ըլլալը չյիշեր : Ասկէց յայտնի է որ յ՛ Սրբազան Պատրիարքի կողմէն անոր երեսօխոսանական պատիւն անարգելու դիտում մը տեղի ունեցած է երբէք , և ոչ մէկը կրնայ Նորին Սրբազնութեան կողմէն էֆէնտի ընտրութիւն իբր երեսօխոսան անարգուած համարիլ , վասն զի եղելութիւնն ամբողջ շիտիութեան մ'արդիւնք է : Ուստի՝ ըստ իս՝ պէտք է գրել էֆէնտի ընտրութիւնն իւր երեսօխոսանական պատիւն անարգուած համարելու իրաւունք չունի , հետևապէս պէտք է շարունակել իւր պաշտօնը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Երբ Սրբազան Պատրիարքը կըսէ թէ չեմ անարգած ,

էֆէնտի ընտրութեան էֆէնտին պնդելու չէ . եթէ Նորին Սրբազնութեան բերնէն թո՛ւած ալ ըլլայ անարգական բառ մը այնպիսի խառնաշփոթ պահու մը , էֆէնտի ընտրութեան էֆէնտին պարտքն է ետ կենալ իւր բողոքէն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Իբրև յուզեալ ժամանակի մէջ եղած խօսք մը պէտք չէ այնչափ կարևորութիւն տալ և խնդիր ընել ժողովին մէջ . ես կընդունիմ Ատենապետ փաշային առաջարկութիւնը , այն է գրել էֆէնտի ընտրութիւնն իւր բողոքէն անարգելու դիտում մը ունեցած չէ Ս. Պատրիարք Հայրն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Իմ ըրած քրնութեանս արդիւնքն հասկըցաք և Ղազարոսեան և Փափազեան էֆէնտիներուն դիտողութիւնները լսեցիք . հետևապէս՝ առաջարկութիւնս քուէի կը դնեմ :

Ժողովը միաձայն քուէով ընդունեց Ատենապետ փաշային առաջարկութիւնն , այն է՝ էֆէնտի ընտրութիւնն բողոքին պատասխանել թէ իբրև երեսօխոսան անարգուած չէ երբէք , և հրաւիրել որ իւր երեսօխոսանական պաշտօնը շարունակէ :

6.

ԲՈՒՆՈՒՄԻ 15 ԵՐԵՎԱՆԻ

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Օրակարգին շանցած՝ կանոնադրական դիտողութեան համար խօսք կուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներեցէք . տեսաք որ հիմա դաս մը երեսօխոսան հեարզհետէ խորհրդարանէն մեկնեցան սա՛ գիրը ներկայացնելով դիւանին :

(Եւ Ատենապետ փաշան կարգաց հետևեալը)

« Նախընթաց նստին մէջ Ազգային վարչութեան դէմ եղած անարգանաց հատուցումը մայր դիւանն անպայման և անորոշ վիճակի մէջ յառաջիկայ նստին թողած լինելով , այս պարագայիս մէջ ստորագրեալ երեսօխոսանքս չեմք ուզեր մեր գործադիր իշխանութեան պատուոյն

պաշտպանութեան անտարբեր կարծուիլ . ուստի և կը մեկնիմք ժողովարանէն՝ բողոքելով սոյն յետաձգման դէմ » :

11/25 փետրվար 1877

- | | |
|------------------|--------------|
| Յ. Մերեթեւեւեւ | Յ. Կրճիկեան |
| Մ. Յրէնիկեան | Մ. Էսեւեան |
| Յ. Աստեան | Է. Զոյեան |
| Յ. Նորհարանիկեան | Ղ. Հովնաթեան |
| Գ. Պետրոսեան | Ա. Ունեան |
| Յ. Յովնիկեան | Ն. Գրգորեան |
| Տ. Փետրոսեան | Լ. Պետրոսեան |
| | Մ. Գրգորեան |

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Մարդս ակար է . ունի այնպիսի վայրկեաններ , որոց մէջ կրնայ մտքէն շանցածն ու սրտէն չը բղխածը բերնէն դուրս տալ , և անով իւր դէմինը կրնայ արհամարհեալ համարուիլ : Սակայն անոր հոգին ու սիրտը քննելու է թէ արդեօք կամա՞ւ և գիտութեամբ ըրաւ այդ արհամարհանքը՝ թէ ոչ ակամայ բերնէն սպրդելով : Իարձեալ ամեն յանցանք իրեն թեթեւացուցիչ պարագաներ կրնայ ունենալ : Ինձ համար շատ զարմանալի է սա զուգադիպութիւնն՝ որոյ առջև կը գտնուինք այսօր : Այն ինչ երեսօխոսան մը բողոք կը բառնայ Նախագահ Սրբազանէն անարգուած ըլլալուն համար , վարչութիւնն ալ նմանօրինակ բողոք մը կընէ երեսօխոսանէ մը անարգուած ըլլալուն համար : Երբ Ատենապետ փաշան յայտարարեց թէ Նախագահ Սրբազանին միտքն անգամ չգար այդպիսի անարգանք մ'ընելը , ժողովն զգալով թէ այն եղելութեան մէջ որ և է դիտում մը չկայ , իսկոյն գոցեց խնդիրը :

Նախընթաց նստին երեսօխոսան մ'ալ ատենագրութեանց տպագրութեան յապաղմանն ու յետաձգմանը դէմ բողոքած պահուն , վարչութեան դէմ բերնէն թընամական բառ մ'արտասանեց , զոր հայհոյանք կը կոչէ վարչութիւնը , և առ ամօթոյն , թէ և ոչ բացարձակապէս՝ գէթ կերպիւ իւրք՝ ըրած թշնամանքն ետ առաւ , ինչպէս կը յիշեն ներկայ գտնուող

ները, և դիւանին յայտարարութեամբ այդ միջոցէս զոցուեցաւ: Այսօր վարչութիւնն անարգեալ ենք ըսելով ըրած բողոքոյն յետաձգման առթիւ կը մեկնի ժողովարանէն . . . :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներեցէք, փափագեան էֆէնտի. հիմա վարչութեան բողոքոյ առարկայ եզող խնդրոյն վրայ խօսելու ժամանակը չէ. այն խնդիրն առաջիկայ նստին ձգուած է արդէն. այսօր վիճարանութեան չկրնար ենթարկուիլ: Եթէ այժմ խօսելու նիւթ մ'ունինք, այն ալ երեսփոխանաց մէկ մասին բողոքելով ժողովարանէն մեկնինք է, ևս կարծեցի թէ անոր վրայ պիտի խօսիք:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Շատ աղէկ կը նեն այդ երեսփոխան էֆէնտիները չէ թէ առնել քաղերուն՝ այլ բողոքելուն մասին վասն զի վարչութիւնն ըսուած մարմինն այս ժողովէն ընտրուած է. անոր պատիւը մեր ալ է. ուստի ամենս ալ բողոքելու և հատուցում պահանջելու պարտաւոր ենք երբ վարչութեան պատուոյն դէմ արատ մը գայ: Սակայն պէտք է նրկատել թէ քանի որ օրինաւոր պատճառի մը վրայ յետաձգուեցաւ խնդիրն, այն երեսփոխաններն՝ որ սոյն բողոքագիրը տալով առին քաղեցին, միթէ իրաւունք ունին այսպէս ընելու. ո՛չ երբէք. վասն զի խնդրոյ մը յետաձգումը մերժում չէ: Բայց ո՞րչափ ուրախ եմ տեսնելով որ երեսփոխանութեան մէջ պատուոյ զգացումը մինչև այս աստիճանները բարձրացեր է և վարչութեան դէմ փոքր ակնարկութիւն մ'անգամ այժմ աններելի կը համարուի. մինչդեռ կը յիշէք անշուշտ թէ ասկէց քանի մը տարի յառաջ գտնուած վարչութեան մը դէմ նորա Նախագահին կողմէ ի՞նչ ծանր նախատիքներ եղան և մինչև իսկ անոր անդամները ժողովատեղիէն դուրս քաջջուեցան և ցրուեցան և այն ատեն նոյն իսկ վարչութեան, որոյ անդամ կը գտնուէի ևս, բողոքին վրայ ալ արդի նախանձախնդրութիւնն ոչ միայն չերեցաւ, այլ և ըստ թիւն պահուե-

ցաւ, և ուրիշ կերպով նախատական միջոցներ ալ ձեռք առնուեցան երեսփոխանաց ոմանց կողմէն, որոցմէ կը գտնուին այժմ այդ բողոքագիրն ստորագրողաց մէջ: Բայց այսօր ո՞րչափ փոխուած է ժամանակն. այսօր իրենք ամենէն առաջ իրար կանցնին արդի վարչութեան համար: Ես չեմ յուսար որ կուսակցութեան համար է անոնց այս վարմունքն, ոչ, այլ կը յուսամ որ իրենց նախկին սխալը քաւելով օրինակ տալու համար է թէ վարչութիւնն ինչ որ ալ ըլլայ և ով որ ալ ըլլայ՝ պէտք է պաշտպանուի. այո՛, ամեն Հայ պարտաւոր է յարգել վարչութիւնն. այս է սկզբունքը: Իսկ երբ հակառակ Սահմանադրութեան արարք մը տեսնենք վարչութեան վրայ, այն ատեն կրնանք դատել վարչութիւնը և անխառնութեան քուէով մը արկանել իւր պաշտօնէն: Այս նկատմամբ ամեն երեսփոխանաց պարտք է մասնակցիլ վարչութեան դէմ եղած անարգանաց համար բողոք բարձրներուն. բայց յետաձգման մասին բողոքներուն մասնակցելու տեղի չկայ. ուստի ևս կառաջարկեմ որ այս խնդրով ժամանակաւ չըլլանք և օրակարգին անցնինք: Բայց օրակարգին ձեռնարկելէ առաջ խօսք կուզեմ կանոնադրական քանի մը դիտողութիւններ ընելու համար:

Տ. ՄԱՏԹԷՍԻՍ ԵՊՍ. — Այդ մէկ քանի երեսփոխանաց կողմէ ստորագրեալ բողոքագիրը՝ տարակոյս չկայ թէ երեսփոխանաց մեծամասնութեան որոշմանը դէմ բողոք մ'է. ամենս ալ ընդունեցինք՝ որ յառաջիկային մնայ խնդիրը. վասն զի որ և է երեսփոխան չընդունիր լսել այնպիսի նախատական բառ մը իւր վարչութեան համար. բայց որովհետև օրէնքն ու արդարութիւնը կը պահանջեն որ ամբաստանեալն ալ ներկայ ըլլայ և ինքզինք արդարացնէ, անոր համար յառաջիկայ նստին յետաձգել հարկ եղաւ, և այս յետաձգումը չնշանակիր թէ խնդիրը մերժուեցաւ: Ուստի այդ մի քանի երեսփոխանաց բողոքն ոչ միայն անտեղի ուսպօրինաւոր, այլ և անընդունելի կը դա-

տիւմ, և կառաջարկեմ որ անմիջապէս օրակարգին անցնինք:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Քուէի դրէք: **ՉԱՅՆԵՐ.** — Մեկնող երեսփոխանաց բողոքին մերժումը քուէի դրէք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Դիւանը վարչութեան եղած անարգանաց հատուցումը ո՛չ մերժեց և ո՛չ անորոյ և անպայման վիճակի մէջ թողուց. ուստի մեր բողոքող ընկերաց այսպէս մեզ ձգել երթալն ուրիշ բան չնշանակիր, այլ Ազգային ժողովն անգործութեան դատապարտելու կամք, որ կանոնադրութեան ալ դէմ է, ազգասիրութեան ալ. այսքանը բաւական է և հարկ չեմ համարիր քուէի դնել:

Ա. ԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՅ. — Պահ մ'առաջ դաւառներէ եկած ընտրական տեղեկագրեր կարդացուեցան, և դիտողութիւն ընողներ եղան թէ թերի են. կը ցաւիմ որ այս ժողովն՝ որուն վրայ դրած են դաւառացիք իրենց յոյսերը, ևսակա՛նութեան խնդիրներով ժամանակ կանցնէ: Դիւանը պարտք մը կատարեց ըսելով թէ ամբաստանեալ երեսփոխանը լսելէ ետև վճիռ տանք. այո՛, արդարութիւնն այսպէս կը պահանջէ, քանի որ մեք զըստնէն չէ՛մք ընելու օրէնք չունինք. միթէ այս պարագային մէջ տեղի կա՞ր խել մը երեսփոխանաց ձգել երթալուն. անոնց այս ըրածն ուրիշ բան ըսել չէ, բայց եթէ ժողովն անգործութեան դատապարտել պարզապէս ըսել է այս թէ, ամբողջ ա՛զգ, մեզնէ յոյս մի՛ ունենար. ըստ իս՛ շատ աղէկ էր որ ըսէին Ազգին թէ մենք չպիտի կրնանք քու գործերդ նայիլ: Մինչդեռ այսօր առաջին անգամ Դատարարակութեան խնդրով զբաղելու համար եկած ենք հոս, ևսութեան խնդիրներու կը պատահինք, որով կը պարտաւորեն զմեզ Դատարարակութեան խնդիրն, Ազգին համար մահու և կենաց խնդիր մէկի թողուլ: Ուստի ևս ալ կառաջարկեմ կարեւորութիւն չաւ այդ բողոքին, և անցնիլ մեր Օրակարգին:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Ետևութեան խըն-

դիր ըսուեցաւ, ևս չեմ յուսար որ ետևութեան խնդիր ըլլայ հոս. և ոչ իսկ կը հաւատամ թէ այն մեկնող երեսփոխաններն այդ մտօք մեկնեցան. ամեն երեսփոխան ազատ է կամ նստիլ հոս և կամ մեկնիլ. բա՛ւ է որ ժողովը չփակուի. ըստ կանոնադրութեան 24 ձայնից միարանութիւնը բաւական է ամեն վճիռ արձակելու. այնպէս չէ՞ մի՛ Ատենապետ փաշա:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժողովը փակեալ է ըսող չկայ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Երեսփոխանական ժողովն արդարև ծանր կը քալէ, բայց պատճառը մի՛ կարծէք թէ երեսփոխաններն են: Իրա՛ւ է թէ ժամանակաւ կանոնադրութիւնն չունէինք և ժամանակնիս շատ անգամ կանոնադրական խընդիրներով կանցնէինք. բայց այսօր կանոն ունինք՝ որով դեղձումներու դուռը գոցուած է. նաև բազմամուտ և կարող անձ մ'ունինք Դիւանին գլուխը, ամեն բան լաւ հասկցող և ըստ կանոնի մեզի առաջնորդող: Եթէ ծանր կը քալէ ժողովը, միայն սա՛ պատճառներով է որ՝ ժողովն որդեալ ժամանակին չբացուիր, վարչութեան անդամները ժամանակին չեն ներկայանար, դիւանադպիրներն ալ նոյնպէս ժամանակին չեն զրկուիր հոս. նա մանաւանդ մեր աստենադրութիւնները ժամանակին չեն հասնիր մեր ձեռքը, վարչութեան յղեալ կամ անցեալ խնդրոց պատասխանները չեն գար, վարչութեանէն սպասեալ առաջարկութիւնները չեն ներկայանար: Ահա այս պատճառներով է որ ծանր կը քալենք: Այս տարի քաղաքական պատճառներով նիստերնիս բաւական ժամանակ ետ մնաց. նոյնպէս Ս. Մինդեան տօնին առթիւ դարձեալ բաւական միջոց նիստ չեղաւ. անցեալ նստին մեծամասնութիւնն չզոյսացաւ. լա՛ւ է որ հիմակուրէն գոցենք ժողովը և մաշիսին նորը բանանք: Եթէ չէք ուզեր որ ժողովն անգործութեան դատապարտուի այս կերպով, միացէք ինձ հետ, Դատարարակութեան խնդիրն այսօր այս դըր-

նէն ներս մտաւ, ահա՛ խնդիր մը՝ որ ժա-
մանակին ամենէն ստիպողականն է, ինչ-
չօ՛ւ կեցեր էք, այսօր ձեռք առէք զայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Փառապետան է-
ֆէնտի յայտնած ցաւն ամենուս զգա-
ցածն է. ինձ համար արտայայտած ներ-
բողական բառերը մերժելով հանդերձ կը-
սեմ թէ երեսփոխանաց կողմէ երբէք աշ-
խատելու կամք պակասած չէ, և այս աշ-
խատութիւնն անշուշտ արդիւնք մը կրնայ
ունենալ. դժբաղդարար երբեմն հով մը
կը փչէ մեր մէջ, ամեն բան տակնուվրայ
կըլլայ, գիտե՛ս թէ փոթորկի կը հանդը-
պինք. տեսէ՛ք սա միջոցիս, Տէրութեան
վիճակը փոփոխութեան ենթարկեալ ըլ-
լալով, ազգինն ալ բնականաբար անոր
հետ, Պատրիարքնիս կըհրաժարի, վար-
չութեան Քաղաքական ժողովը կը բողոքէ,
երեսփոխանաց մեծ մասն անոր պատուոյն
նախանձախնդրութեամբ կը բողոքեն դի-
ւանին դէմ, մէկ ուրիշ մաս մ'երեսփո-
խանաց ալ անոնց դէմ կը բողոքեն, և այս
ատենին մէջ փոքրամասնութիւն մը և
Գիւանը միայն կը մնան Գաստիարակու-
թեան խնդիրն ի ձեռին. բայց մի՛ կար-
ծէք որ Գիւանն զձեզ կը թողու կերթայ-
ոջ, դիւանը իր սրտին կակիծը կը յայտնէ
այս ամեն եղբուրթեանց վրայ, բայց ան-
յողողող իր պաշտօնը կը շարունակէ. հի-
մա պիտի անցնինք Օրակարգին՝ որ է
Գաստիարակութեան դիւանի տեղեկագի-
րը. միայն թէ երբ քուէի կարգին զա-
լու ըլլանք՝ պիտի կանգ առնունք, վասն
զի մեծամասնութիւն չունինք. այսու ա-
մենայնիւ, ըստ որում այս խնդիրն այն
տեսակ խնդիրներէն է՝ որ իբրև օրինա-
կան ծրագիր երկու երեք անգամ ընթեր-
ցանութենէ անցնիլ պէտք է, ուստի իբր
առաջին ընթերցում կրնանք մտնել մէջը
և վիճարանութիւն բանալ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կանոնական դի-
տողութեան համար ՚ի սկզբան խօսք խնդ-
րած եմ. նոյեմբեր 28ի նստին հարցում
բրած եմ Վարչութեան Պիւտճէին համար,
զէթ առժամանակեայ պիւտճէն չբերե-

լուն համար, և դեռ պատասխան չբերաւ
Վարչութիւնը: Հարցում բրած եմ նոյն
նոյն ատեն նաև Վանօրէից խորհրդոյ և
Կտակաց հոգարարութեան չկազմուե-
լուն համար. ինչօ՛ւ չեկաւ ասոնց պա-
տասխանը: Կառաջարկեմ որ մինչև 15 օր
Պիւտճէն բերուի հոս. եթէ չբերուի՝ ես
առաջինը պիտի ըլլամ ամբաստանող զվար-
չութիւնն: Ասկէ վեց եօթն ամիս առաջ
Ապրո ի ֆէնտին Քաղ. ժողովոյ կողմէ
խոստացաւ առժամանակեայ Պիւտճէ մը
բերել. ո՛ւր է, ինչօ՛ւ չբերին ցարդ:

Կաղաչեմ, Ատենապետ փաշա, Կա-
նոնական պահանջումն ինչ է նէ այս մա-
սին գործադրեցէք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կանոնական պա-
հանջումներէն առաջինն այն է որ իւրա-
քանչիւր ոք իւր պարտքն ու սահմանը
ճանչնայ, և բեմական լեզուի վայելուչ
կերպով խօսի: Կանոնը չներեր որ երես-
փոխան մը Վարչութեան հարցում ուղղե-
լէ ետև պատասխանն ալ բունադատելով
պահանջէ յատենի ժողովոյ. գիտեմ որ
այն եռանդն՝ որ զձեզ կը վառէ, նըպա-
տակ ունի միայն ազգին օգուտը. սակայն
պէտք է չափով և հանդարտութեամբ
վարուիլ. այո՛, ստոյգ է որ վարչութեան
ուղղեալ հարցմանց մեծ մասին պատաս-
խանն չեկաւ ցարդ, սակայն գիտնանք
նաև թէ Վարչութիւնն զբաղեալ է ծանր
գործերով. նաև չէ՛ վայել կանխաւ գո-
չել թէ պիտի ամբաստանեմ Վարչութիւ-
նը. ինչ որ պիտի ընէք դուք՝ պէտք է
գիտնաք և ըստ օրինի վարուիք: Վար-
չութեան գլուխն հրաժարման վրայ է այ-
սօր. ատենապետը բացակայ կը գտնուի
փոխ ատենապետն և անդամոց մէկ քա-
նին արդէն հրաժարած են. սա՛ վիճակին
մէջ փոքրիկ շունչ մը բաւակա՛ն է վար-
չութիւնը տապալելու. բայց խոհեմու-
թի՛ւն է տապալել. մտածեցէ՛ք և այն-
պէս վարուեցէ՛ք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Վարչութեան
մասին բրած ակնարկութիւններս՝ որչափ
ալ հանդարտ լեզուով խօսուած չթուին,

ածեմ թէ իրաւունքի սահմանէն դուրս
չեն իրաւունք չէ ըսողներուն՝ ահա՛ Կա-
նոնադրութեան 84րդ յօդուածը ցոյց
կուտամ, որ Սրբազան Պատրիարքին հա-
մար կը տրամադրէ թէ « Կրնայ ամբաս-
տանուիլ երեսփոխանաց կողմէն՝ Սահմա-
նադրութեան հակառակ ընթացքի մը հա-
մար, կամ անոր գործադրութեան ան-
հոգութեանը համար »:

Մի և նոյն յօդուածոյ գորութեամբ
կրնայ ամբաստանուիլ նաև Վարչութիւնն՝
երբ անհոգ և անփոյթ գտնուի իւր սահ-
մանադրական պարտաւորութեանց մէջ:

Կաղաչեմ, հանդարտութեամբ մտիկ
ըրէք իմ ըսածներս, որպէս զի խնանցք
թէ ո՛չ Սահմանադրութեան և ո՛չ Կանո-
նադրութեան գծէն դուրս չեմ ելած:
Անցեալ յունիսին մէջն էր Քաղ. ժողովոյ
բրած խոստումը յատենի աստ Պիւտճէ-
ին համար. այսօր փետրվար 11 է, տա-
կաւին Պիւտճէն չէ եկած. եթէ կարե-
ւորութիւն մը չունի Պիւտճէն չփնտռենք.
բայց սահմանադրական ազգի մը երես-
փոխանութեան պարտաւորութեանց ա-
ռաջինն է գրեթէ իւր Պիւտճէն նայիլ.
չատ բան ըսած ունիմ այս մասին, զորս
առ այժմ չեմ յայտարարեր. երբ Պիւտ-
ճէն գայ՝ այն ատեն կը խօսինք:

Ար կրկնեմ թէ մինչև 15 օր Պիւտճէն
գալու է հոս. ապա թէ ո՛չ պիտի պար-
տաւորիմ ամբաստանադիր ներկայացնել:
Չկարծուի թէ ՚ի կրից շարժեալ են այս
խօսքերս. ո՛չ. ես իմ խզճմտանքի պար-
տաւորութիւնս կատարել կուզեմ. եթէ
ըսածներուս մէջ Սահմանադրութեան
կամներքին Կանոնադրութեան հակառակ
կէտ մը կայ, ետ կառնում: Երբ կըսեմ
թէ պիտի ամբաստանեմ վարչութիւնը,
դուք ինձ կըսէք՝ Ատենապետ փաշա, թէ
ինչօ՛ւ այս աստիճան յառաջ կերթաք. ձեր
այս ըսածը կ'զգամ և լաւ կերպով կըմ-
բռնեմ. ստոյգ է որ դեկտեմբեր 11ին
Օսմանեան Սահմանադրութիւնը հրատա-
րակեցաւ. անկէ առաջ միապետական
կառավարութեան տակ սահմանադրա-
կան ազգ կը կոչէին զմեզ և զգուշաւո-

րութեան կը հրաւիրէին, որով շատ ան-
գամ մեր երեսփոխանական պարտաւո-
րութիւնը ճշդիւ կատարելէ կ'զգուշանա-
լինք. հիմա քանի որ կառավարութիւնն
նիս ալ սահմանադրական եղաւ և Օսմանե-
ան երեսփոխանութիւնը քիչ օրէն իւր
նիստը պիտի ընէ, և թերևս իւր առա-
ջին խնդիրն ընէ Պիւտճէն, մինչդեռ Հա-
յոց երեսփոխանութիւնը տակաւին իւր
պիւտճէն չըննեց, պէտք է ուրեմն մեր
սահմանադրական պարտաւորութիւնները
լիովին կատարենք և պահանջենք՝ որ մեր
ազգային Պիւտճէն ալ, որուն երեսը
ցարդ պահուած է, ժողովիս ներկայա-
նայ ան յապաղ և առանց զանցաւորութեան:
Այս նկատմամբ կը կրկնեմ իմ հարցում-
ներս և կը խնդրեմ Գիւանէն՝ որ քուէի
դնէ:

Մինչև հիմա ըսածներս վարչութեան
միայն վերաբերեալներն էին. ուրիշներու
համար ալ խօսք ունիմ: Յաւ է ըսել որ
մեր դիւաններն ալ անգործութեան մէջ
են. մինչև հիմա դիւաններուն ի՛նչ խըն-
դիրներ որ յանձնեցինք՝ սրատասխանները
չառինք. անոնք որ այս կազմութեան
փոյթ տարին, ինչօ՛ւ չեն հոգ տանիր
նաև անոնցմէ սրատաւորութիւն պահան-
ջելու. ի՛նչ կարծէ կազմութիւն մը՝ երբ
անգործ է:

Համարառու յանձնախումբ մ'ալ կազ-
մեցինք, որ 70 թուականէն սկսեալ եկող
զացող վարչութեանց համարները պիտի
քննէր և արդիւնքը պիտի բերէր մեզի-
ո՛ւր է, ի՛նչ ըրաւ մինչև ցարդ՝ չգիտենք:
Ո՛ւր է 71-72ի վարչութեան համարա-
տուութիւնը՝ որ շատ անգամ խոստաց-
ուած է ու ցարդ բերուած չէ. ո՛ւր է
74-76ի Թառն ժողովոյ համարատու-
թիւնն. այս ալ դեռ չներկայացաւ. եթէ
մինչև յառաջիկայ մայիս չներկայանան
ասոնց համար ալ ամբաստանադիր պիտի
մատուցանեմ ժողովին:

Թող չկարծուի թէ անձնական նկա-
տումներ կան խօսքերուս մէջ. ամենևին
չեմ ընդունիր. իմ երեսփոխանական պար-

տաւորութիւնս կը պահանջէ որ անգործութեան և զանցառութեանց դէմ բողոքեմ, և միշտ պիտի բողոքեմ. այն որ ազգային պաշտօնի մը հետամուտ է և յանձնառու, պէտք է որ իւր պարտաւորութիւնը կատարէ, և մեք ալ իբրև երեսփոխան մեր հսկելու պարտաւորութիւնը պէտք է որ ճշդիւ կատարենք: Ի՞նչ բաներ տեսանք ու լսեցինք անցեալ ամիսներու մէջ և բողոքելէ ետ կեցանք մինչև ցարդ. ազգային պաշտօնի վրայ դեռ ժամանակին չը լրացնող անձինք դուրս թողուեցան իրենց պաշտօնէն, և լաւ համարեցին լուել, որպէս զի վարչութեան գործերուն դէմ որ և է արդելք մը յարուցած չըլլան: Ահա այսչափ զգուշութիւն և համբերութիւն գործածուած է: Վարչութիւնն ինչո՞ւ տապալի. նա պէտք է որ իւր պաշտօնն ու պարտաւորութիւնը ճշդիւ կատարէ, և երեսփոխանական ժողովիս վերաբերեալ պիտոյքները չանտեսէ: Ես երեսփոխանական պաշտօնէս զատ ուրիշ պաշտօն չունիմ այժմ և հետամուտ չեմ. բայց այս պաշտօնն ալ խզի մտօք պիտի կատարեմ. ապա թէ ոչ՝ պէտք է զայն ալ թողում խզմտանքիս խայթէն ազատ մնալու համար:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. ԵՒ ԱՅԼՔ. — Զայնակից ենք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ճիշդ պահ մ'առաջ ըսածիս պէս՝ կանխաւ յայտարարել թէ սա՛պէս կամ նա՛պէս պիտի ընեմ, հակառակ է կանոնադրութեան, հակառակ է ազգին շահուց, և միանգամայն սպառնալիք ընել է, որ ըսել է ազդեցութիւն բանեցնել: Գոցենք այս խնդիրն և անցնինք Գաստարակութեան տեղեկագրին. խօսք ուզողները կը հրաւիրեմ ՚ի բեմ. առաջին ընթերցման մէջ ենք:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Գաստարակութեան դիւանի տեղեկագիրը ծայրէ ՚ի ծայր և ուշադրութեամբ կարդացի և տեսայ որ դիւանը խիստ գեղեցիկ ամփոփում մը կը ներկայացնէ անցեալ վարչութեանց ուսումնական մասին համարա-

տուութեանց տեղեկագրոց, և կեզրակացընէ քանի մ'առաջարկութեամբք, որոց մէկն է ստիպողականութիւն տալ Գաստարակութեան խնդրոյն ըստ իմն առաջարկութեան. այս կէտն անմիջապէս քուէի դրուիլ կառաջարկեմ: Երկրորդ՝ վարժարանաց բարեկարգութեան հրահանգի ծրագիրն օրակարգն անցնելու և յօդուած առ յօդուած քննելու համար ըրած առաջարկութիւնն ալ կընդունիմ: Այս երկուքին քուէարկութեան դրուիլը կառաջարկեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ահա ասիկ խորհրոյն առաջին կէտին քուէարկութեան հարկն երևան ելաւ, բայց երեսփոխանաց շատերը ցրուելուն պատճառաւ, մնացողաց մէջ դոնէ 24 ձայնից միարանութիւն չեմ կարծեր որ գոյանայ, և ըստ որում խնդիրն 3 անգամ վիճարանութենէ պիտի անցնի, ուստի այսօր առանց մանր պարզաներուն մէջ մտնելու այսքանով բաւականանանք, և յառաջիկայ նստին շարունակենք:

Ար մնայ յաջորդ նստին օրն որոշել, որովհետև ՚ի սկզբան Ատենադպիր էֆէնտին 3 շաբաթ միջոց խնդրեց վերջին մի քանի ատենագրութեանց հրատարակութիւնը հասցնելու համար: Դուք ՚ի՞նչ կորոշէք:

Երեսփոխանք միաձայն որոշեցին որ ըստ սովորութեան 15 օրէն գումարուի յաջորդ նիստը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Դուք այդպէս կորոշէք. բայց ես ալ կը յայտարարեմ թէ այս նիստին ատենագրութիւնը չպիտի ունենայ:

Ժամն ցին քառօրդ մնալով՝ ատենը գոցուեցաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Գ. Յ. ՄԵԼԻՔ
 ԱՏԵՆԱՊԵՏ Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Խորէն եպիսկոպոս	Մխիթարեան	Ա. Ատենապետ
2	Յակոբ փարիսապետ	Փափազեան	Ա. Ատենադպիր
3	Գեորգ Աւագ Ք.	Արծրունի	Բ. Ատենապետ
4	Գարրիել	Չիչլըճեան	
5	Յովհաննէս	Մկրեան	
6	Իլնատիս	Մանավեան	
7	Գրիգոր	Սէթեան	
8	Խաչատուր	Քչից	Տ. Գարրիելեան
9	Արիստակէս		Բ. Ատենադպիր
10	Պետրոս		Քարակէօմրիւկի
11	Աթանաս		Փափազեան
12	Մեսրոպ		Ա. Խաչ յիւսկիւտար
13	Մկրտիչ		Երէցեան
14	Զաքարիա		Պալատու
			Բերայի

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Ապրօ	Սահակ	էֆէնտի	Ա. Ատենապետ
2	Շահապ	Կարապետ		Բ. »
3	Նուբեան	Յովհաննէս		Ա. Ատենադպիր
4	Պոյաճեան	Յովհաննէս		Բ. »
5	Նորատունկեան	Յակոբ		
6	Կալիսիական	Սերոբէ		
7	Էսայեան	Յովհաննէս		
8	Ազնաւորեան	Յովհաննէս		
9	Սաքայեան	Ալիքսան		
10	Մազսուտեան	Սեպուհ		
11	Կրճիկեան	Անդրանիկ	պէյ	
12	Մարկոսեան	Գրիգոր	էֆէնտի	
13	Քաղսզեան	Յակոբ		
14	Յրէնկեան	Յակոբ		

ԳԻՆ ԵՐԿՈՒ ԴՐՈՒՇ ՊՂԻՆՁ



Կը ծախուի Ղալաթիա Մասիա լրացրոյ դրասենեակը,
Ղալաթիոյ եկեղեցւոյն բանկայը, Դարագեղի կամուրջին
զլուին Երկանեան Ղուկաս աղային Պարաքան, և Կ. Պօլսոյ
կողմն ալ ջրալաճառ Պօղոս աղային խանութը: